

ՏԵՂԵԿԱՆՔ

Մրցույթների անցկացման ընթացակարգի վերաբերյալ

Միտելի՛ դիմորդ, ողջունում ենք Ձեզ և շնորհակալություն հայտնում մեր հայտարարությանն արձագանքելու համար:

ՀՀ կենտրոնական բանկում թափուր աշխատատեղերը համալրելու նպատակով անցկացվող մրցույթի ընթացակարգը ընթանում է հետևյալ փուլերով՝

1. Փաստաթղթերի ընդունում
2. Փաստաթղթային ստուգում
3. Նախնական գնահատման փուլ
4. Վերջնական գնահատման փուլ

1. Փաստաթղթերի ընդունում. ՀՀ Կենտրոնական բանկի Անձնակազմի կառավարման վարչություն, մրցույթի հայտարարությամբ սահմանված ժամկետում, թղթային կամ էլեկտրոնային տարբերակով (www.HRM@cba.am) ներկայացնում եք դիմումի ձևը (տես www.cba.am «Մեր մասին», «Դիմումի ձև»):

Փաստաթղթերի ընդունումից հետո Անձնակազմի կառավարման վարչությունը կատարում է փաստաթղթերի ստուգում համաձայն տվյալ աշխատատեղում պահանջվող կրթության, մասնագիտական ստաժի և համաձայն պահանջվող այլ փաստաթղթերի:

Մրցութային հարցաշարը (մասնագիտական համապատասխանելիությունը որոշող հարցաշար) տեղադրվում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում կամ տրամադրվում է փաստաթղթերի հանձնման օրը:

2. Նախնական գնահատման փուլ. փաստաթղթային ստուգումն անցնելուց հետո, անհրաժեշտության դեպքում (4 և ավելի դիմորդների առկայության դեպքում), Ձեզ հրավիրում են նախնական հարցազրույցի: Հարցազրույցի բավարարողյունքի դեպքում Դուք անցնում եք հաջորդ գնահատման փուլը, իսկ անբավարար արդյունքի դեպքում՝ զրկվում եք մրցույթը շարունակելու իրավունքից:

3. Փաստաթղթային ստուգում.

Մինչ մրցույթի վերջնական գնահատման փուլը, Դուք անցնում եք հոգեբանական թեստ՝ տվյալ աշխատատեղին անհրաժեշտ հմտությունների, գործարար որակների ստուգման, ինչպես նաև հետազայում, դրանք զարգացնելու նպատակով:

Համաձայն աշխատատեղի պահանջների ընտրության արդյունքում, եթե աշխատանքային փորձն ու կրթությունը բավարարում են տվյալ աշխատատեղի համար սահմանված պահանջներին, ապա Անձնակազմի կառավարման վարչություն եք ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- դիպլոմ և դիպլոմի միջուկ (պարտադիր պայման է համարվում հայրենական կամ արտասահմանյան պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության կրթությունը՝ բակալավր կամ դիպլոմավորված մասնագետի որակավորմամբ),
- անձնագիր,
- սոցիալական ապահովության քարտ կամ սոցիալական ապահովության քարտ շունենալու մասին տեղեկանք,
- զինվորական գրքույկ: Չինվորական գրքույկ ներկայացնում են զինված ուժերի շարքերից արձակվածները, իսկ զորակոչային տարիքի և ժամկետային զինվորական ծառայություն չանցած արական սեռի անձինք՝ տեղեկանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով զինվորական հաշվառման մեջ գտնվելու, ժամկետային զինվորական ծառայությունից ազատվելու կամ ժամկետային զինվորական ծառայությունից տարեկետման իրավունք ունենալու մասին:
- աշխատանքային գրքույկ, բացառությամբ առաջին անգամ աշխատանքի ընդունվողների՝ առաջին անգամ աշխատանքի ընդունվողները Կենտրոնական բանկ ընդունվելիս լրացնում են դիմում (հավելված 3), իրենց համար աշխատանքային գրքույկ բացելու համար:
 - վկայագիր (գիտական աստիճան ունեցող անձինք),
 - երեխաների ծննդյան վկայականները,
 - 2 գունավոր լուսանկար (3x4),
 - ***երաշխավորագիր/եր կամ երաշխավորող անձի/անձանց տվյալներ (անուն, ազգանուն, աշխատանքի վայր, պաշտոն, հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե):***

Փաստաթղթերի ընդունումից հետո Անձնակազմի կառավարման վարչությունը հեռախոսագանգերի կամ լրացուցիչ փաստաթղթեր հավաքագրելու միջոցով կատարում է փաստաթղթերի ճշտության և ամբողջականության ստուգում՝ համաձայն տվյալ աշխատատեղում պահանջվող կրթության, մասնագիտական ստաժի, ներկայացված երաշխավորագրերի և այլ փաստաթղթերի:

4. Վերջնական գնահատման փուլ. նախորդ փուլերը անցնելու դեպքում՝ վերջնական գնահատման փուլի անցկացման օրվանից առնվազն մեկ օր առաջ, Անձնակազմի կառավարման բաժինը Ձեզ հայտնում է այդ փուլի անցկացման օրը և ժամը:

Վերջնական գնահատման փուլն անց է կացնում Կենտրոնական բանկի ատեստացիոն հանձնաժողովը: Ատեստացիոն հանձնաժողովը մրցույթի անցկացման ձևը որոշում է տեղում՝ ատեստացիոն հանձնաժողովի նիստի ժամանակ: Մրցույթի անցկացման ձևերն են՝

1. **Գրավոր առաջադրանք.** Ձեզ տրվում են հարցեր ստորաբաժանման/մասնագիտական խմբի հարցաշարից, իրավիճակային խնդիրներ և այդ հարցերին գրավոր պատասխանելու համար 1-3 ժամ: Աշխատանքը կատարվում է համակարգիչներով:
2. **Հարցազրույց.** Ձեզ առաջարկվում է պատասխանել մրցութային հարցաշարից ընտրված մի շարք հարցերի և գործարար որակները բացահայտող հարցերի:
3. **Երկու փուլով՝ գրավոր առաջադրանք և հարցազրույց*:**

* Մրցույթների անցկացման ընթացակարգի մասին մանրամասն տես՝ www.cba.am «Մեր մասին», «Աշխատակցի Ձեռնարկ»:

Մրցույթի արդյունքների մասին Ձեզ կտեղեկացնի Անձնակազմի կառավարման բաժինը:

Մաղթում ենք հաջողություն...

ՀՀ կենտրոնական բանկի Անձնակազմի կառավարման վարչություն